ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Բացատրագիր

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ֆրանսերենի ծրագիրը ներառում է .

- միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման առանձնահատկությունները, նպատակները, սկզբունքները,
- սովորողին ներկայացվող պահանջները՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանուր ծավալը,
- խոսքային գործունեության 4 տեսակների ընդհանուր բնութագիրը,
- թեմատիկ պլանը:

Մեթոդական ուղեցույցը ներառում է.

- մեթոդական ցուցումներ սույն ծրագրով աշխատելու վերաբերյալ,
- ուսումնական գործունեության տեսակների նկարագրություն,
- մեթոդների նկարագրություն,
- դասի պլանի նմուշ,
- ուսումնական նյութերի վերաբերյալ բացատրություն:

Ֆրանսերենի ծրագրում սահմանված են դասընթացի բովանդակությունը, թեմաները, լեզվական նյութի ուսուցման հաջորդականությունը և կատարված է թեմատիկ դասաբաշխում: Ծրագիրը նախատեսված է 72 ժամի համար:

Ծրագրում տեղ գտած թեմատիկան, քերականությունը, բառապաշարը ընտրված են՝ հաշվի առնելով միջին մասնագիտական կրթական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման առանձնահատկությունները, նպատակները և սկզբունքները:

2. Ֆրանսերենի ուսուցման առանձնահատկությունները միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման գլխավոր նպատակը սովորողին ֆրանսերենով հաղորդակցվել սովորեցնելն է:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցումն ունի մի շարք առանձնահատկություններ.

- սովորողները ուսումնական հաստատություն են գալիս առարկայի իմացության տարբեր մակարդակներով,
- տարբեր են ոչ միայն գիտելիքները, այլև դրանք կիրառելու, դրանցից օգտվելու կարողություններն ու հմտությունները,
- միատարր չեն տարբեր մասնագիտություններ ընտրած սովորողների հետաքրքրությունների շրջանակը, անհրաժեշտ լեզվական նյութի ծավալը, հաղորդակցման համար նախատեսվող թեմատիկան,
- թույլ են կամ բացակայում են սովորողների օտար լեզու սովորելու դրդապատճառները:

3. Ֆրանսերենի ուսուցման նպատակները միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում

Օտար լեզվի իմացությունը սովորողին հնարավորություն է տալիս ընդլայնելու հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները, որն էլ հեշտացնում է ապագա մասնագետի մուտքը աշխատանքային շուկա, հնարավորություն է ստեղծում ազատ

շփվելու, հաղորդակից լինելու այլ ժողովուրդների մշակույթին և օտար լեզվով ներկայացնելու սեփական մշակույթը:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման նպատակներն են.

- ամրապնդել սովորողների ունեցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- հաղորդել նոր գիտելիքների որոշակի ծավալ՝ սովորողների ունեցած գիտելիքների հիմքի վրա,
- ձևավորել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու, հետագայում կատարելագործելու և մասնագիտական ոլորտում ինքնակրթությամբ զբաղվելու կարողություններ և հմտություններ:

4. Ֆրանսերենի ուսուցման սկզբունքները միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման սկզբունքներն են.

- իրականացնել աշակերտակենտրոն ուսուցում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ընտրած մասնագիտության առանձնահատկությունները,
-ուսուցումը կազմակերպել օտար լեզվով՝ ուսուցչի և մյուս սովորողների ակտիվ համագործակցության մթնոլորտում,
- սովորողների մոտ ձևավորել հմտություններ, որոնք կօգնեն լուծելու հաղորդակցական խնդիրներ, առավել առօրեական, գործնական և սովորողների մասնագիտությանը վերաբերող իրադրություններում,
-ուսուցումը նպատակաուղղել ուսուցման հաղորդակցական նպատակի իրագործմանը՝ խոսքային գործունեության բոլոր տեսակների ուղղությամբ (ունկնդրել, խոսել, կարդալ, գրել),
- ուսուցումը կառուցել լեզվական դժվարությունները հաղթահարելու հաղորդակցական միջոցների՝ բանալիների արագ յուրացման և լեզվական բազմաբնույթ միջավայրին ընտելանալու կարողության սկզբունքի վրա:

5. Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջներ

5.1. Խոսքային գործունեության տեսակների համառոտ նկարագիրը

Միջին մասնագիտական հաստատությունում ֆրանսերենի ուսուցման գործնական նպատակն այն է, որ սովորողը կարողանա տարբեր իրադրություններում հանպատրաստից հաղորդակցվել : Ստորև ներկայացնում ենք խոսքային գործունեության տեսակների համառոտ նկարագիրը:

Ունկնդրել (խոսքը լսելով հասկանալ)

Ունկնդրել նշանակում է ընկալել, հասկանալ, առանձնացնել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը և անհրաժեշտության դեպքում նաև արձագանքել:

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է կարողանա լսելով հասկանալ 3-5 րոպե տևողությամբ ծանոթ քերականական նյութ և բառապաշար պարունակող տեքստեր (կենդանի խոսքով և ձայնագրությամբ) :

Սովորողը կարող է կարողանա ունկնդրելով՝

- հասկանալ տեքստի բովանդակությունը ընդհանուր գծերով,
- հասկանալ տեքստի մանրամասն բովանդակությունը,
- առանձնացնել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը,
- հասկանալ և ըմբռնել աշխատավայրում, դպրոցում, ժամանցի վայրերում և այլուր պարբերաբար հանդիպող ծանոթ թեմաների մասին հստակ գրական լեզվով խոսքի հիմնական իմաստը,
- հասկանալ պարզ տեղեկատվություն աշխատանքի, ուսման, հանգստի, ճանապարհորդության վերաբերյալ,
- հասկանալ կարճ պատմություններ,
- հասկանալ պարզ տեխնիկական տեղեկատվություն,
- հասկանալ հեռուստածրագրերի և ռադիոհաղորդումների հիմնական բովանդակությունը,
- հասկանալ ընթացիկ իրադարձություններին կամ անձնական ու մասնագիտական հետաքրքրություններին առնչվող տեեղեկատվությունը, երբ խոսքը դանդաղ է և հստակ :

Խոսել

Երկխոսություն (մասնակցել խոսակցության)

Երկխոսության մասին խոսելիս անհրաժեշտ է հիշել, որ այն ենթադրում է հաղորդակցման կանոնների պահպանում, լեզվական և ոչ լեզվական միջոցների կիրառում՝ ելնելով երկխոսության հաղորդակցական նպատակներից :

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է կարողանա.

- մասնակցել տարբեր զրույցների՝ կարողանալով հաղորդել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ 5-8 ճիշտ կառուցված ռեպլիկ փոխանակելով,
- գլուխ հանել այն հիմնական իրավիճակներում, որ կարող են ծագել ֆրանսախոս միջավայրում,
- հանպատրաստից մասնակցել անձնական հետաքրքրություններին կամ անձնական ու, մասնագիատական կյանքին առնչվող թեմայով զրույցին(ընտանիք, նախասիրություններ, ճանապարհորդություն, ընթացիկ իրադարձություններ, նորություններ և այլն),
- փոխանակաել տեղեկատվություն,
- ձևակերպել բողոք (խանութում,փոստում, բանկում),
- նկարագրել հիվանդության ախտանշանները, ֆիզիկական վիճակ,
- տալ մանրամասն տեղեկատվություն,
- արտահայտել զգացմունք (զարմանք, ուրախություն, տխրություն, հետաքրքրասիրություն, անտարբերություն),
- կարծիք հայտնել և հարցնել,
- արտահայտել համաձայնություն, անհամաձայնություն,
- սկսել, շարունակել և ավարտել խոսակցությունը:

Մենախոսություն (արտահայտվել բանավոր և շարունակաբար)

Մենախոսություն վարել նշանակում է պատմել, նկարագրել, բնութագրել և այլն:

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է կարողանա.

- համապատասխան իրադրություններում հանպատրաստից խոսել տեսածի, լսածի, կարդացածի և այլն մասին 10-15 նախադասության սահմաններում՝ հիմնավորելով սեփական տեսակետը և պահպանելով խոսքի տրամաբանական ընթացքը,

- պարզ միջոցներով կապակցել արտահայտությունները՝ նկարագրելու համար կենսափորձը, իրադարձությունները, երազանքները, հույսերն ու ձգտումները,

- հակիրճ հիմնավորել և բացատրել սեփական կարծիքներն ու ծրագրերը,

- պատմություն պատմել կամ ներկայացնել գրքի, ֆիլմի սյուժեն ու տպավորությունները, ընտրած մասնագիտության առանձնահատկությունները :

Կարդալ

Կարդալ կարելի է բառարանով և առանց բառարանի՝ ելնելով հաղորդակցական խնդրի բովանդակությունից:

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է կարողանա.

բառարանով կամ առանց բառարանի, տեղեկատվություն ստանալու նպատակով լուռ կարդալ գեղարվեստական, գիտահանրամատչելի գրականությունից հեշտացված հատվածներ 350-450 բառի սահմաններում,

- հասկանալ առօրյա լեզվով շարադրված իր մասնագիտության վերաբերյալ տեքստեր,

- հասկանալ իրադարձությունների, զգացմունքների, ցանկությունների նկարագրություններ անձնական նամակներում,

- հասկանալ ամսագրի հոդվածի գլխավոր կետերը,

- հասկանալ տեքստի փաստերի տրամաբանական կապը:

Ընթերցել՝

- հիմնական բովանդակությունն ընկալելու նպատակով,

- մանրամասն բովանդակությունն ընկալելու նպատակով,

- անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունն առանձնացնելու նպատակով :

Գրել

Մտքերը գրավոր արտահայտել նշանակում է պահպանել խոսքի բովանդակային և հուզական կողմը, մտքերի տրամաբանական կապը, համապատասխանությունը հաղորդակցական նպատակին և այլն :

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է ծանոթ լինի գրավոր խոսքի տարբեր տեսակներին (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, թեստ, գործնական գրություններ) :

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է կարողանա.

- լրացնել անձնական թերթիկներ և ձևաթղթեր,

-գրել նամակներ՝ նկարագրելով սեփական կենսափորձն ու տպավորությունները, զգացմունքները,

-ունենալ բավականաչափ բառապաշար և քերականական գիտելիքներ՝առօրյա (ընտանիք, ուսում, ճանապարհորդություն, և այլն) կամ իր մասնագիտության վերաբերյալ տեղեկատվություն տալու համար,

- միացնել կարճ, պարզ, հստակ բաղադրիչներ և միտքը հասցնել մինչև վերջ,

- նկարագրել որևէ իրադարձություն՝ պահպանելով գործողությունների հաջորդա-կանությունը և պատճառահետևանքային կապը,

- գրել պարզ, կապակցված տեքստ ծանոթ թեմայի, ընտրած մասնագիտության, անձնական հետաքրքրությունների շուրջ,

- գրել գործնական գրություններ,
- գրավոր պատմել անեկդոտներ,
- գրել որևէ խնդրի մասին:

5.2. Ֆրանսիայի և ֆրանսախոս երկրների մշակույթի վերաբերյալ գիտելիքներ

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է ունենա Ֆրանսիայի մշակույթի և ժողովրդի հասարակական կյանքի մասին հետևյալ գիտելիքները.

1. Ֆրանսիայի մասին աշխարհագրական տեղեկություններ (մայրաքաղաք, մեծ քաղաքներ, մեծ գետեր, լեռներ և դրանց մասին հիմնական տեղեկություններ) :
2. Ֆրանսերենը որպես **Շվեյցարիայի, Բելգիայի, Կանադայի մի մասի, Լյուքսեմբուրգի, Հաիթիի, Մալիի, Նիգերիայի, Սենեգալի, Կոնգոյի, Զաիրի** պետական լեզու:
3. Առօրյա կյանքի հետ առնչվող տեղեկություններ (սննդի և ըմպելիքի, ուտելու ժամերի, սեղանի շուրջ պահելաձևի, ազատ ժամանցի, հագուստի և այլն) :
4. Միջազգային նշանակության տոների և մրցումների մասին տեղեկություններ:
5. Ավանդույթների և սովորույթների հետ առնչվող տեղեկություններ (տոներ, տոնակատարություններ, ծեսեր, նվերներ, հյուրասիրություն և այլն):
6. Լրատվամիջոցների հետ առնչվող տեղեկություններ: Օրինակ՝ թերթերի, հեռուստատեսության և ռադիոհաղորդումների անվանումներ և այլն :
7. Կենցաղի, մշակույթի և կենսամակարդակի հետ առնչվող տեղեկություններ:
8. Քաղաքականության, կրթության, գիտության, կրոնի, պատմության մասին տեղեկություններ: Քաղաքական կառուցվածքը, պատմական նշանավոր անձինք և իրադարձություններ:

Հաշվի առնելով ֆրանսախոս երկրների մշակույթի և հասարակական կյանքի առանձնահատկությունները՝ հաղորդակցությունը համապատասխանեցնել այդ երկրների համար ընդունելի համարվող վարքի կանոններին:

Օրինակ՝ հասարակական վայրերում (մետրոյում, կայարանում, օդանավակայանում, խանութում, հանգստյան վայրերում, հանդիպումների ժամանակ, տանը, դպրոցում, խաղալիս , հեռախոսով խոսելիս, հյուրընկալվելիս և այլն.) :

8. Միջանձնային հարաբերություններ:

Օրինակ՝ սեռերի միջև փոխհարաբերություններ, ընտանեկան, սերունդների միջև հարաբերություններ և այլն:

9. Արվեստի, գրականության մասին տեղեկություններ:
10. Միջմշակութային կապեր Հայաստանի և Ֆրանսիայի միջև: Հայաստանի տարին Ֆրանսիայում և այլն:
11. Ֆրանսիացի նշանավոր մարդիկ:

6.Ֆրանսերենով հաղորդակցման համար առաջարկվող թեմաների թեմատիկ պլան

Թեմա	Ենթաթեմա	Հաղորդակցական նպատակ	Կարողություններ, հմտություններ
Ծանոթություն /6 ժամ/	Բարի գալուստ	Ողջունել,ներկայանալ, հարցնել և ասել անունը, ազգանունը,ազգությունը, մասնագիտությունը:	Կարողանալ ողջունել և ներկայանալ:
	Հանդիպում	Առանձնացնել և բնութագրել. ինչ-որ մեկին, ինչ-որ խմբի:	Կարողանալ ներկայացնել ինչ-որ մեկին, ինչ-որ խմբի:
	Լա՞վ ես	Հարցնել խոսակցին նրա նորությունների, որպիսության մասին, հարցնել տարիքը, հասցեն, հեռախոսի համարը:	Կարողանալ խոսել ինչ-որ մեկի մասին, տեղեկություններ հավաքել՝ օգտվելով ծանոթ քաղաքավարական ձևերից:
	Հաղորդակցություն	Ներկայանալ, խոսել իր ճաշակի և նախասիրությունների մասին, խոսակցին հարցնել նրա ճաշակի, նախասիրությունների մասին:	Կարողանալ գրավոր ներկայանալ, խոսակցություն վարել սեփական նախասիրությունների վերաբերյալ և տեղեկանալ խոսակցի կամ խոսակիցների նախասիրությունների մասին:
Ես բացահայտում եմ աշխարհը /4 ժամ/	Ես կողմնորոշվում եմ	Անվանել առարկաները, ցույց տալ և տարածության մեջ տեղակայել դրանք, տեղեկատվություն ստանալ անծանոթ վայրում կողմնորոշվելու համար, օգնել որևէ մեկին կողմնորոշվելու անծանոթ վայրում:	Կարողանալ նկարագրել որևէ տեղանք կամ առարկա, հարցնել և տալ մանրամասն տեղեկատվություններ՝ տեղանքում կողմնորոշվելու համար:
	Նկարագրություն	Արտահայտել պատկանելություն, տարբերել առարկաների գույները և երկրաչափական ձևերը:	Կարողանալ նկարագրել որևէ մեկին և նրա հագուստները, նկարագրել որևէ իր, նկար, տեսարան, իրադարձություն և այլն:

Ամենօրյա կյանք /6 ժամ/	Օրվա ռեժիմ	Խոսել օրվա պլանների մասին, հարցնել ուրիշի և արտահայտել սեփական կարիքները, տեղեկանալ ինչ-որ մեկի ամենօրյա պարտականու-թյունների, անելիքների և սովորույթների մասին:	Կարողանալ նկարագրել օրվա ընթացքը, խոսել առօրյա պլանների մասին, խոսակցություն վարել ամենօրյա անելիք-ների և սովորույթների վերաբերյալ:
	Առօրյա	Խոսել առօրյա գործերի և անցած իրադարձությունների մասին, արտահայտել սեփական կարծիք, տեղեկանալ խոսակցի կարծիքի մասին, հաճոյախոսու-թյուններ անել:	Կարողանալ խոսել առօրյա գործերի և անցած իրադարձու-թյունների մասին, արտահայտել և հիմնավորել սեփական կարծիքը:
Ընտանիք և ընկերներ, մասնագիտություն /8 ժամ/	Ընտանեկան ալբոմ	Համեմատել, որոշում կայացնել, խոսել մասնագիտու-թյունների մասին:	Կարողանալ խոսել ընտանիքի անդամ-ների, նրանց մասնա-գիտությունների, տանը ունեցած պարտականություն-ների, ընտանեկան հավաքների մասին, խոսել ընտրած մասնագիտության մասին և հիմնավորել ընտրությունը:
	Ընկերներ և նախասիրություն-ներ Ապագայի ծրագրեր	Խոսել ընկերների, նախասիրությունների մասին, բնութագրել, համեմատել,խոսել սեփական և հարցնել խոսակցի ծրագրերի մասին:	Կարողանալ խոսել ընկերների, նախա-սիրությունների մասին, բնութագրել, համեմատել, խոսել սեփական և հարցնել խոսակցի ծրագրերի մասին, համեմատել, փաստարկել, հիմնավորել:
Տուն, բնակարան /8 ժամ/	Իմ տունը Իմ բնակարանը	Ներկայացնել սեփական տան, բնակարանի ընդհանուր նկարագիրը:	Կարողանալ խոսել սեփական տան, բնակարանի մասին՝ նկարագրելով ընդհանուր գծերով (ճաշասեյակ, հյուրասենյակ,

			ննջասենյակ, խոհանոց, լոգարան, և այլն), տեղեկատվություն ստանալ խոսակցի տան, բնակարանի վերաբերյալ:
	Տան, բնակարանի կահույք Իմ սենյակը	Խոսել տան, բնակարանի կահավորանքի մասին,ներկայացնել սեփական սենյակը, որպես տան, բնակարանի սիրած անկյուն:	Կարողանալ ներկայացնել սեփական տան, սենյակի կահավորանքը՝ նկարագրելով տարբեր սենյակների կահույքը, դասավորությունը և այլն:
Խանութ, գնումներ, սնունդ, հագուստ /8 ժամ/	Տարբեր մասնագիտացված խանութներ Գնումներ	Տարբեր մասնագիտացված խանութների նկարագրությունը:	Կարողանալ խոսել տարբեր մասնագիտացված (հացի, մսամթերքի, կաթնեղենի, հագուստի և այլն) խանութների մասին՝ նշելով, թե որտեղից ինչպիսի գնումներ կարելի է կատարել:
	Սնունդ (սննդի տարբեր տեսակներ, մրգեր, բանջարեղեն) Հագուստ	Նշել քանակություններ, անվանել սննդի տարբեր տեսակներ, մրգեր, բանջարեղեն: Թվարկել ամառային, ձմեռային, նորաձև հագուստներ:	Կարողանալ նկարագրել սննդի հետ կապված գնումները խանութում և շուկայում,կարողանալ նշել քանակություններ, ներկայացնել գնումները մեծ խանութներում՝ պատկերացնելով խոսակցությունը վաճառողների հետ:
Ճանապարհորդություն Տուրիզմ Օդանավակայան /6 ժամ/	Արձակուրդներ և ճանապարհորդություն	Դպրոցական արձակուրդներ (ամառային, ձմեռային), դրանց առանձնահատկությունները, դպրոցական արձակուրդները Ֆրանսիայում և Հայաստանում: Ներկայացնել ճանապարհորդությունը որպես աշխարհայացք	Կարողանալ ներկայացնել դպրոցական արձակուրդները Հայաստանում, Ֆրանսիայում, համեմատել, գտնել նմանություններն ու տարբերությունները, կարողանալ խոսել իր կատարած ճանապարհորդության մասին և մանրամասներ

		ձևավորելու միջոց:	հարցնել խոսակցից նրա կատարած ճանապարհորդության վերաբերյալ:
	Օդանավա-կայան Հյուրանոց	Հաղորդակցվել օդանավակայանում և հյուրանոցում:	Կարողանալ պատվիրել օդանավի տոմս հեռախոսով, համակարգչով կամ տոմսարկղում՝ նշելով ուղղությունը, տոմսի տեսակը (միայն գնալու, թե գնալու և վերադարձի), ժամկետները, քանի հոգու համար՝ 6-7 նախադասության սահմաններում բացատրելով խնդրի էությունը, կարողանալ պատվիրել հյուրանոցային համար հեռախոսով, համակարգչով կամ հյուրանոցում՝ 6-7 նախադասության սահմաններում բացատրելով խնդրի էությունը:
Հայաստան /8 ժամ/	Պատմական և աշխարհագրական համառոտ տեղեկություններ Հայաստանի, նրա տեսարժան վայրերի, պատմական հուշարձանների հայտնի մարդկանց, տոների, սովորույթների, խոհանոցի վերաբերյալ:	Տալ և ստանալ տեղեկատվություն Հայաստանի մասին:	Կարողանալ ներկայացնել և պարզ խոսակցություն վարել Հայաստանի պատմության, աշխարհագրության, տեսարժան վայրերի, հայտնի մարդկանց մասին, կարողանալ ներկայացնել ազգային և եկեղեցական ամենահայտնի մի քանի տոն (Անկախու-թյան օր, Նոր տարի, Գեղեցկության տոն, Զատիկ և այլն), ազգային սովորույթներ, ազգային խոհանոցը մի քանի բաղադրատոմսերով:

Ֆրանսիա /8 ժամ/	Պատմական և աշխարհագրա-կան համառոտ տեղեկություններ Ֆրանսիայի և Ֆրանսախոս երկրների մասին, համառոտ տեղեկություններ այդ երկրների տեսարժան վայրերի, պատմական հուշարձանների, հայտնի մարդկանց, տոների, ազգային խոհանոցի մասին:	Տեղեկատվություն տալ և ստանալ Ֆրանսիայի մասին:	Կարողանալ ներկայացնել և պարզ խոսակցություն վարել Ֆրանսիայի պատմության, աշխարհագրության, տեսարժան վայրերի, հայտնի մարդկանց մասին, կարողանալ թվարկել մի քանի ֆրանսախոս երկիր, ներկայացնել ազգային և եկեղեցական ամենահայտնի մի քանի տոն (Ֆրանսիայի ազգային տոնը՝ հուլիսի 14, Ծննդյան տոներ, Զատիկ և այլն), կարողանալ ներկայացնել ֆրանսիական խոհանոցի մի քանի տեսականի և որևէ բաղադրատոմս:
Մասնագիտական ուղղվածություն ունեցող թեմաներ՝ ըստ ուսումնական հաստատության հայեցողության /10 ժամ/			

9. ԾՐԱԳՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ներկայացված ծրագիրը իր կառուցվածքով ճկուն է և հնարավորություն է տալիս դասավանդողին ներկայացված մոտեցումները համադրել դասավանդման սեփական պատկերացումների հետ՝ չհեռանալով օտար լեզուների ուսուցման հաղորդակցական սկզբունքից : Միջին մասնագիտական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ֆրանսերենի թեմատիկ պլանավորումը ներկայանում է 4 բաժիններով՝ *թեմա*, որը մանրամասնվում է ենթաթեմաների միջոցով, *հաղորդակցական նպատակ,* որտեղ սահմանվում են, թեմայի ուսուցման գործնական կամ հաղորդակցական նպատակը և տվյալ թեմայի շրջանակներում ձեռք բերված գիտելիքները համապատասխան իրավիճակներում կիրառելու ակնկալվող *կարողություններն ու հմտությունները:*

Ֆրանսերենով հաղորդակցման համար առաջարկված թեմաները ընտրված են այնպես, որ սովորողը արձագանքի և արտահայտվի ժամանակակից և ընդհանրական թեմաների շուրջ, ինչպես ընկերներ, ընտանիք, գնումներ և այլն: Թեմաների բազմազանությունը մեծացնում է հաղորդակցական կարողությունների, բառային, քերականական և մշակութային գիտելիքների զարգացման ու խորացման հնարավորությունները : Թեմաներին հատկացված ժամաքանակները դասավանդողի հայեցողությամբ կարող են թույլատրելի փոփոխությունների ենթարկվել : Թեմատիկ պլանում նշված են այն կարողություններն ու հմտությունները, որ ակնկալվում են թեմայի ուսումնասիրության ավարտին : Միտումնավոր, թեմատիկ միավորները շատ ընդհանրական են տրված, որպեսզի ուսուցիչը կարողանա հաշվի առնել և սովորողների գիտելիքների մակարդակը, և մասնագիտական առանձնահատկությունները, մանրամասնի կամ նոր ենթաթեմաներ ավելացնի :

Թեմաների վերաբերյալ գրականություն ընտրելիս՝ անհրաժեշտ է նայել տվյալ թեմայի համար ծրագրով սահմանված հաղորդակցական նպատակներին: Թեմայի ուսուցումը պետք է ուղեկցվի համապատասխան ուսումնական գործունեությամբ, որը կապահովի ակնկալվող վերջնական արդյունքը՝ այն է ծրագրով նախատեսված կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Մասնագիտական թեմաների ընտրությունը թողնվում է դասավանդողի հայեցողությանը: Սակայն ընտրությունը պետք է կատարել խնամքով՝ ուշադրություն դարձնելով մասնագիտական անհրաժեշտ բառապաշարին և քերականությանը:

Հասկանալի է, որ ժամերի սահմանափակ լինելու պատճառով հավասարապես հնարավոր չէ զարգացնել և գրավոր, և բանավոր խոսքը: Առավել մեծ ուշադրություն հատկացնելով բանավոր խոսքին և ընթերցանությանը՝ չպետք է մոռանալ, որ գրավոր խոսքը ևս կարևոր է և կան գրավոր խոսքի տեսակներ, որոնց իմացությունը պարտադիր է լեզուն ուսումնասիրող ցանկացած անհատի համար: Այսպես՝ գրել ուղղորդված շարադրություններ, թեստեր, ինքնակենսագրություն (CV), նամակ, լրացնել տարբեր ձևաթղթեր և այլն:

Քերականությունը և բառապաշարը ներմուծվում են համապատասխան թեմայի շրջանակներում՝ հաղորդակցական խնդիր լուծելու նպատակով : Քերականության բոլոր թեմաներին զուգահեռ սահմանված են հաղորդակցական նպատակները և կիրառելու ոլորտները (կարողություններ, հմտություններ) : Թեմաները և քերականական նյութը կարելի է համապատասխանեցնել՝ ելնելով ընտրած բնագրերից: Սա նշանակում է, որ բնագրերն անհրաժեշտ է ընտրել այնպես, որ համապատասխանեն ոչ միայն որոշակի թեմայի, այլև պարունակեն ծրագրով նախատեսված որևէ քերականական նյութ , բավարարեն սովորողների հետաքրքրությունները, ցանկություն առաջացնեն լեզուն սովորելու:

Լեզուների ուսուցման ժամանակակից մոտեցումներում գոյություն ունի «հաղորդակցական քերականություն» հասկացությունը : Այս մեթոդիկան առաջարկում

է քերականության ուսուցումը ֆունկցիոնալ և իրավիճակային հիմքի վրա: Դա նշանակում է, որ քերականական երևույթները ուսուցանվում են ոչ որպես «ձևեր» և «կառուցվածքներ», այլ որպես որոշակի մտքեր ու հարաբերություններ արտահայտելու միջոց : Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ սովորած քերականական ձևերի ու կառույցների գործածության համար, որոնք հարաբերվելու և մտքերն արտահայտելու հաղորդակցական – ֆունկցիոնալ դեր են կատարում : Այդպիսի պայմաններ են խոսակցական իրավիճակները, երբ սովորողը պետք է գործածի ուսուցանվող երևույթը՝ համապատասխան հաղորդակցություն ապահովելու համար : Ցանկալի կլինի նման իրավիճակային դասերի ժամանակ հաշվի առնել սովորողների մասնագիտական հետաքրքրությունները :

Այսպես՝ հրամայական եղանակի օգնությամբ կարելի է արտահայտել խնդրանք, առաջարկություն, հրավեր, թույլտվություն, հրաման և այլն: Սովորողներին կարելի է առաջարկել իրավիճակային վարժություններ՝ հրամայական եղանակի նպատակային գործածության համար (տես՝ «Ուսումնական գործունեության տեսակներ» :

Քերականության թեմատիկ պլանը տրված է ոչ թե որպես առանձին նյութ դասավանդելու համար, այլ որպես պատշաճ հաղորդակցություն ապահովելու համար անհրաժեշտ քերականական գիտելիքների ուղեցույց :Թեմատիկ պլանը հուշում է, թե միջին մասնագիտական հաստատության սովորողը քերականական ինչ գիտելիքներ պետք է ունենա տարբեր իրավիճակներում հաղորդակցվելու համար:

«Ֆրանսիայի և ֆրանսախոս երկրների մշակույթի վերաբերյալ գիտելիքներ» բաժնում ընդհանուր գծերով նշված է այն նվազագույն տեղեկությունների ոչ ամբողջական ցանկը, որ անհրաժեշտ է ֆրանսերեն սովորող յուրաքանչյուր անհատի: Ծրագրով աշխատողները ազատ են այդ ցանկում փոփոխություններ կատարելու և ցանկը կարող են լրացնել սովորողների մասնագիտության հետ առնչվող տեղեկություններով:

Քերականության թեմատիկ պլան

Թեմա	Հաղորդակցական նպատակ կարողություններ, հմտություններ
Ուղղագրություն և ուղղախոսություն (Orthographe et orthoépie)	
- տվյալ տարիքային խմբի համար նախատեսված նոր բառերի ընթերցանության և գրության իմացություն - ֆրանսերենի հնչյունների ճիշտ արտասանություն (կրկնություն) - ուղղագրական նշաններ (signes orthographiques: accent aigu, accent grave, accent circonflexe, cédille, tréma, apostrophe, trait d'union) (կրկնություն) - ճիշտ շեշտադրում բառերում, բառախմբերում և ռիթմիկ խմբերում - ձայնակապ (liaison) (կրկնություն) - շղթայակցում (enchaînement) (կրկնություն) - կետադրական նշաններ **(**signes de ponctuation: point , virgule, point et virgule, tiret, parenthèses, point d'interrogation, point d'exclamation, guillemets) (կրկնություն) - հաղորդակցական տարբեր բնույթ ունեցող նախադասությունների (propositions informatives/énonciatives, interrogatives, exclamatives) հնչերանգը(կրկնություն)	- ուղղագրության և ուղղախոսության հմտությունների զարգացում, ճիշտ գործածություն ծանոթ և անծանոթ լեզվական նյութի մեջ - իմանալ liaison-ի և enchaînement–ի կանոնների գործածությունը և կարողանալ գործածել բանավոր խոսքի բարեհնչյունությունն ապահովելու համար -իմանալ կետադրական նշանները և կարողանալ ճիշտ գործածել գրավոր խոսքում -հաղորդակցական տարբեր բնույթի նախադասությունների ճիշտ հնչերանգի պահպանում և կիրառում բանավոր խոսքում
Բառապաշար և բառակազմություն (Vocabulaire et formation des mots)	

- անցած լեզվական միավորների իմացության կրկնություն և ամրապնդում - հաղորդակցական նոր թեմաներ և իրադրություններ սպասարկող ակտիվ բառապաշարի ընդլայնում, բազմիմաստ (mots polysémiques) և օտարազգի (mots internationaux) բառերի իմացություն (մոտ՝ 1500բառ) - հոմանիշ (synonyme), հականիշ (antonyme), համանուն (homonyme) բառեր - ածանցում. նախածանցներ (préfixes:ad-, com-, contre-…) և վերջածանցներ (suffixes:-ain, -aine, -ais, -aise, - teur, -oire, -ade…)	- իմանալ և կարողանալ համապատասխան իրադրություններում ճիշտ գործածել ուսումնասիրվող երկրի մշակույթը, կենցաղն ու սովորույթներն արտացոլող բառապաշարը, լեզվական միավորներն ու խոսքային նմուշները -Իմանալ ֆրանսերենի բառակազմության հիմնական ձևերը
Հոդ (Article)	
- հոդը որպես սպասարկու խոսքի մաս, տեսակները, նշանակությունը և գործածությունը (կրկնություն)	- իմանալ հոդի տեսակները և ճիշտ գործածել կամ չգործածել գոյականների հետ գրավոր և բանավոր խոսքում համապատասխան հաղորդակցական իրադրություններում
Գոյական (Nom)	
- գոյականի իգական սեռի կազմությունը հոդի փոփոխմամբ **(un enfant-une enfant…),** վերջավորության փոփոխմամբ (-teur-trice, -eur-euse, -er-ère, -ier- ière, -on-onne….), կազմության հատուկ դեպքեր (loup- louve…), գոյականներ, որոնք չունեն իգական սեռ (professeur, journaliste...): Գոյականի հոգնակի թվի կազմության հատուկ դեպքեր (-al-aux, -ail-aux…): - գոյականների սեռը ըստ նրանց վերջածանցների **-** aire- un dictionnaire - isme- un réalisme - tion-une attention	- իմանալ գոյականների իգական սեռի և հոգնակի թվի կազմության տարբեր դեպքերը և կարողանալ ճիշտ գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ համապատասխան հաղորդակցական իրադրություններում

- ure- une figure ***և այլն*** (կրկնություն)	
Ածական (Adjectif)	
- որակական ածականների (Adjectifs qualificatifs) իգական սեռի կազմությունը (կրկնություն) - արական սեռում կրկնակի ձև ունեցող որակական ածականներ (կրկնություն) - որակական ածականների հոգնակի թվի կազ-մությունը և գործածությունը (կրկնություն) - որակական ածականների համեմատության աստիճանները (Degrés de comparaison des adjectifs qualificatifs) - դերանվանական ածականներ (Adjectifs possessifs) - հարցական դերանվանական ածականներ (adjectifs interrogatifs) - ցուցական դերանվանական ածականներ (adjectifs démonstratifs) - անորոշ դերանվանական ածականներ (adjectifs indéfinis)	-իմանալ որակական ածականների իգական սեռի և հոգնակի թվի կազմության տարբեր դեպքերը և կարողանալ ճիշտ գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ համապատասխան հաղորդակցական իրադրություններում - իմանալ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ պատկանելություն արտահայտելու, որևէ առարկա կամ անձ մատնանշելու համար և այլն
Թվական (Adjectifs numéraux)	
- 1-1000 քանակական (adjectifs numéraux cardinaux) և դասական թվականների (adjectifs numéraux ordinaux) գործածությունը: Դասական թվականների կազմությունը - տարեթվերի և ամսաթվերի գրությունը և գործածությունը:	- իմանալ քանակական և դասական թվականների գործածության հիմնական ոլորտները և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ համապատասխան հաղորդակցական իրադրություններում՝ քանակ, կարգ, ամսաթիվ տարեթիվ և այլն նշելու համար

Դերանուն (Pronom)	
- խնդիր անձնական դերանունների (Pronoms personnels compléments) տեղը նախադասության մեջ - երկու խնդիր դերանունների տեղը նախա-դասության մեջ - en և y դերանունները - ստացական (possessif) - ցուցական (démonstratif) - հարաբերական **(relatif)** - անորոշ (indéfini) - հարցական (interrogatif) դերանուններ	- իմանալ և հարկ եղած դեպքում ճիշտ տեղում գործածել խնդիր դերանունները գրավոր և բանավոր խոսքում՝ համապատասխան հաղորդակցական իրադրություններում, անձնանունների ավելորդ կրկնություններից խուսափելու համար
Բայ (Verbe)	
- սահմանական եղանակի ժամանակաձևերը(présent/ կրկնություն, imparfait, passé composé, futur simple, plus-que-parfait, passé simple, futur proche) - սահմանական եղանակի ժամանակների համաձայնությունը (concordance des temps de l'indicatif: plan du présent, plan du passé) - պայմանական եղանակի երկա ժամանակ (conditionnel présent) -ըղձական եղանակի ներկա ժամանակ(subjonctif présent) -հրամայական եղանակ (impératif) -անդեմ դարձվածքներ (il est intéedit, il est utile, il est important etc.) - բայի անդեմ ձևեր(gérondif) - եղանակավորող բայեր	- իմանալ սահմանական եղանակի ժամանակների համաձայնության սկզբունքները և կարողանալ հաղորդել գործողության կատարման միաժամանակություն, նախորդելու կամ հաջորդելու գաղափար՝ գործածելով բայերը համապատասխան ժամանակներով -իմանալ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում ցանկություն արտահայտելու համար -իմանալ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում հնարավորություն և պարտավորություն արտահայտելու համար - իմանալ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում խորհուրդ և հրաման արտահայտելու համար - իմանալ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում համապատասխան հաղորդակցական իրադրություններում, խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար

Մակբայ (Adverbe)	
- մակբայների տեսակները ըստ իմաստի - ձևի մակբայի **(adverbe de manière)** կազմությունը **-ment** վերջածանցի միջոցով -մակբայների համեմատության աստիճանները (Degrés de comparaison des adverbes) -սահմանափակման մակբայ **(Locution restrictive: ne…que**) -մակբայների տեղը նախադասության մեջ (Place des adverbes) -մակբայների համեմատության աստիճանները	- իմանալ մակբայների տեսակները, գործածության ոլորտները, տեղը նախադասության մեջ և կարողանալ գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ գործողության տեղ, ժամանակ, ձև և այլն նշելու նպատակով - կարողանալ գործածել սահմանափակման մակբայը գրավոր և բանավոր խոսքում՝ խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար
Նախդիր (Préposition)	
-ամենագործածական նախդիրների (à, de, vers, chez, avec, sans, pour…) գործածությունը բարդ նախդիրների (prépositions composées ou locutions prépositives: à cause de, à travers, au dessous de…)	- իմանալ և կարողանալ գործածել նախդիրները՝ բառերի, բառախմբերի, նախադասության անդամների միջև խնդրառական և պարագայական հարաբերություններ արտահայտելու համար
Շաղկապ (Conjonction)	
-համադասական (mais, ou, et, donc, or, ni, car) և ստորադասական(quand, que, parce que, comme, si) ամենագործածական ..շաղկապներ	- իմանալ սպասարկու խոսքի մասերի դերը խոսքի կառուցման մեջ և գործածել միմյանց հաջորդող գործողությունների գաղափար հաղորդելու, իղձ, նպատակ, ցանկություն արտահայտելու համար
Ձայնարկություն (Interjection)	
- ձայնարկություն (Hé !, Eh!.. Voyons! Par exemple!)	- իմանալ և կարողանալ գործածել ձայնարկությունը գրավոր և բանավոր խոսքում՝ հուզմունք, հիացմունք, զարմանք, զայրույթ

	արտահայտելու համար
Շարահյուսություն (Syntaxe)	
- նախադասության գլխավոր անդամներ. - ենթակա *(sujet),* ենթակայի արտահայտման ձևերը, ենթակային տրվող հարցերը - ստորոգյալ (prédicat), ստորոգյալի արտահայտման ձևերը. պարզ ստորոգյալ (prédicat verbal), բաղադրյալ ստորոգյալ (prédicat nominal), ստորոգյալին տրվող հարցերը ▪ Պարզ նախադասություն (Phrase simple): ▪ Բարդ նախադասություն (Proposition complexe, phrase): ▪ Համադասական և ստորադասական նախադասություններ: ▪ Բառերի շարադասությունը նախադասության մեջ: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:	- իմանալ նախադասության գլխավոր անդամների արտահայտման ձևերը, նրանց տրվող հարցերը՝ շարահյուսորեն ճիշտ գրավոր և բանավոր խոսք կառուցելու համար:

Բառապաշար

Այս բաժնում նշվում են այն բնագավառները, որոնց շուրջ պետք է զարգացնել բառապաշարը :
Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է.
- ունենա հաղորդակցության համար անհրաժեշտ բառապաշար 1500 բառ,
հետևյալ բնագավառների վերաբերյալ.

- *Առօրյա կյանք*

- հանգիստ, զվարճություններ,գնումներ, տրանսպորտ, ճանապարհորդություն :

- *Մարդկանց նկարագիր*

- հագուստ, ֆիզիկական նկարագիր, բնավորություն :

- *Իրադարձություններ, հանդիպումներ*

- վթար,
- բնական երևույթներ:

- *Մասնագիտություն*

- ուսում,
- մասնագիտություններ,
- պաշտոն,
- աշխատանքային գործունեություն:

- *ՁԼՄ*

- հեռուստատեսային ծրագրեր և ռադիոհաղորդումներ,
- ամսագրեր,
- ինտերնետ,
- հասարակական կյանք :

- *Տեղանք*

- քաղաք,
- գյուղ,
- ֆիզիկական աշխարհագրություն :

- *Արվեստ*

- կինո,
- թատրոն,
- նկարչություն,
- գեղարվեստական գրականությունից հեշտացված հատվածներ:

Միջին մասնագիտական հաստատության սովորողը պետք է.

- իմանա հոմանիշներ, հականիշներ,բազմիմաստ բառեր, դրանց բացատրությունները,
- ունենա ընտրած մասնագիտությանը հատուկ նվազագույն բառապաշար,
- իմանա բառակազմության հիմնական ձևերը,
- իմանա բառեր/բառային միավորներ (օրինակ՝ հատուկ և հասարակ անուններ, առարկաների անուններ և այլն) ,
- դարձվածքներ (կայուն բառակապակցություններ),
- դարձվածային կաղապարներ (կլիշե) :

Ստորև ներկայացվում են խոսքային գործունեության տարբեր տեսակները զարգացնող տեքստերի տիպեր: Տեքստերի նշված տեսակները դասավանդողներին կողմնորոշելու համար են և չեն պարտադրվում:

Առաջարկվում են տեքստերի հետևյալ տեսակները.

1.**Տեքստեր ունկնդրելու և խոսելու համար**

- կարճ նկարագրություն,
- կարճ տեղեկատվական տեքստ (հաղորդագրություն),
- կարճ պատմվածք (պատմություն),
- երգեր, բանաստեղծություններ,
- կարճ արարողակարգային երկխոսություն,
- երկխոսություն-հարցում,
- երկխոսություն-մտքերի փոխանակում,
- հարցազրույց,
- գեղարվեստական երկերից, հեքիաթներից, առակներից պարզեցված հատվածներ,
- ձայնագրություն և տեսաֆիլմ:

Տեքստերի այս տեսակների միջոցով կարելի է զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները.

-հասկանալ բանավոր կարճ նկարագրության, հաղորդման, պատմության ընդհանուր միտքը և տեղեկատվություն տալ այդ մասին,

- հասկանալ և պատասխանել, երբ հարցնում են իր և իր հետաքրքրությունների, ընտանիքի անդամների, ընկերների մասին, հասկանալ գործողությունների հրահանգներ և նման հրահանգներ տալ,
- հասկանալ երկխոսություններ՝ հիմնվելով լրացուցիչ նյութի վրա,
- հասկանալ ծանոթ թեմայով մուլտֆիլմի, տեսաֆիլմի,առօրյա իրադարձությունների մասին հեռուստատեսային և ռադիոհաղորդումների, կարճ ձայնագրությունների հիմնական բովանդակությունը,
- կարողանալ ընդունել հրավերը կամ քաղաքավարի մերժել՝հիմնավորելով հրավերքն ընդունելու կամ չընդունելու պատճառները,
- հանպատրաստից ազատ զրույց վարել ուսման, առօրյայի, սիրած զբաղմունքի, ներկա կամ ապագա իրադարձությունների մասին :

Տեքստեր ընթերցելու համար

- նկարագրություն,
- պարզ տեղեկատվություն,
- հարցազրույց,
- գովազդ, հայտարարություն,
- երգեր, բանաստեղծություններ,
- ոչ ծավալուն պատմվածքներ,
- երկխոսություններ,
- գեղարվեստական գրականությունից պարզեցված հատվածներ,
- էլեկտրոնային տեքստեր և այլն:

Տեքստերի այս տեսակների միջոցով կարելի է զարգացնել ընթերցելու հետևյալ կարողությունները.

-կարդալ և հասկանալ տեքստի առանձին հատվածների, պարբերությունների միջև եղած կապը,

-կարդալ և հասկանալ տեքստի հիմնական թեման, կարևոր իրադարձությունների շղթան, տարբերակել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից,

-տեքստի վերաբերյալ հարցեր տալ և պատասխանել հարցերին :

Տեքստեր գրելու համար

-դիմում,

-անձնական թերթիկ, հարցաթերթիկ,

-ինքնակենսագրություն,

-առօրյայի նկարագրություն,

-նամակ, շնորհավորական բացիկ,

-շարադրություն (էսսե),

-պատի թերթ:

Տեքստերի այս տեսակների միջոցով կարելի է զարգացնել գրելու հետևյալ կարողությունները.

- գրել համառոտ ինքնակենսագրություն,
- գրել նամակ կամ բացիկ (նաև էլեկտրոնային),
- շնորհավորել,
- նորություններ հաղորդել և հետաքրքրվել նորություններով,
- գրել նկարագրական տեքստ ընտանիքի, ընկերների, դպրոցի, հայրենի գյուղի կամ քաղաքի և այլն մասին :

Ուսումնական գործունեության տեսակներ

Առաջարկվում են ուսումնական գործունեության բազմաթիվ ու բազմազան տեսակներ՝ ունկնդրելու, խոսելու կարողությունները զարգացնող, բնագրի հետ աշխատելու, գրավոր խոսքը զարգացնող, քերականական նյութի ուսուցման և այլն: Յուրաքանչյուր թեմայի ուսուցման համար կարելի է ընտրել համապատասխան ուսումնական գործունեության տեսակներ, գտնել կամ կազմել տվյալ դասի նպատակին համահունչ առաջադրանքներ :

Ուսումնական գործունեությունը ենթադրում է.

- անհատական աշխատանք
- խմբային աշխատանք

Անհատական աշխատանք

- ինքնուրույն աշխատանք տպագիր տեքստերի և տեխնիկական միջոցների հետ.
- օգտագործել տեղեկատվական լրացուցիչ աղբյուրներ (բառարաններ, տեղեկատու գրքեր, այլ ուսումնական նյութեր),
- վերլուծել սեփական սխալները, աշխատել դրանց վերացման ուղղությամբ:

- ընթերցած նյութը բաժանել առանձին իմաստակիր հատվածների, դրանք վերլուծել, համադրել, եզրահանգումներ անել,
- կարդացած տեքստի մասին հարցեր կազմել և պատասխանել տրված հարցերին,
- բառային աշխատանք,
- բացատրել անծանոթ բառերը, պատկերավոր արտահայտությունները, կազմել հոմանիշների, հականիշների, դարձվածների թեմատիկ բառախմբեր, սովորած բառերն օգտագործել գրավոր և բանավոր խոսքում:

- կապակցված խոսք կազմել և մշակել, օրինակ՝ նամակ, հաղորդագրություն, ինքնակենսագրություն, որևէ իրադարձության արձանագրություն.
- կազմել բնութագրական, նկարագրական խոսք. կարծիք հայտնել, վերլուծել, (գրավոր և բանավոր):

- հիմնական տեղեկատվությունը տարբերել երկրորդականից,
- համեմատել, զուգադրել և վերլուծել:

- աշխատանքային խմբում ունենալ սեփական դերը և պարտականությունները.
- նախագծեր կազմել և իրականացման ուղիներ նշել:

Զույգերով և խմբային աշխատանք

Զույգերով և խմբային աշխատանքը դասարանում ավելի արդյունավետ է դարձնում հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Ստորև ներկայացվում են դասարանում զույգերով և փոքր խմբերով գործունեության մի քանի գործնական օրինակներ, որոնք մեզ հայտնի թեմաներով դասավանդումը դարձնում են ավելի հետաքրքիր և արդյունավետ:

Լսելու և խոսելու կարողությունները զարգացնող գործունեություն

Ունկնդրում

Աշակերտներին առաջարկվում է ունկնդրելիք տեքստի բովանդակության, իրադարձությունների ընթացքի վերաբերյալ ***կանխատեսումներ անել****՝ հիմք ընդունելով.*

- վերնագիրը, թեման,
- հեղինակի անունը,
- նկարները, սխեմաները,
- բանալի-բառերը,
- տրված հարցերը:

Մինչև ունկնդրումը աշակերտները հորինում են պատմության իրենց նախնական տարբերակը՝ հիմնվելով տեքստին առնչվող նկարների կամ վերնագրի վրա, այնուհետև, ունկնդրելուց հետո այն համեմատում են բնօրինակի հետ:

Աշակերտներին առաջարկվում է լսել ձայնագրություն կամ կենդանի խոսք կամ դիտել տեսաֆիլմ և պատասխանել հարցերին :

Ընտրել տրված նկարների շարքից (3-4 նկար) ունկնդրած տեքստին համապատասխանողը:

Ընտրել տրված պնդումների 3-4 տարբերակներից ճիշտը կամ ունկնդրած տեքստին համապատասխանողը:

Տրված պնդումների մեջ տարբերակել ճիշտն ու սխալը:

Տրված պնդումների մեջ տարբերակել ճիշտը, սխալը կամ այն, որը չի առնչվում տեքստի բովանդակության հետ :

Լսել նախադասությունների խումբը երկու անգամ և որոշել, թե որ նախադասությունն է ավելացել կամ պակասել երկրորդ ընթերցման ժամանակ:

Լսել նախադասությունների մի խումբ և առանձնացնել իմաստով մյուսներին չհամապատասխանող նախադասությունը:

Լսել իմաստով մոտ երկու տեքստ և բացահայտել տարբերությունները:

Լսել տեքստի սկիզբը և գուշակել, թե ինչով կարող է այն ավարտվել:

Աշակերտներն ունկնդրում են երկխոսություններ, հարցազրույց կամ մի քանի զրուցակիցներով զրույց և կատարում առաջադրանքը.

- տարբերակել զրուցակիցներին (սեռը, տարիքը, այլն),
- որոշել խոսակիցներից յուրաքանչյուրի խոսքի տեմպը (արագ, դանդաղ, ընդհատումներով և այլն),

- որոշել, թե խոսակիցներից ով է լեզվակիր և ով՝ օտարերկրացի:

Լսել ձայնագրություն կամ կենդանի խոսք կամ դիտել տեսաֆիլմ և կատարել առաջադրանքը.

- համեմատել և ճիշտ համակցել ու համադրել տեքստի տարբեր մասերն ու համապատասխան նկարները կամ գծանկարները,
- համակցել կիսված նախադասությունների սկիզբն ու ավարտը,
- համադրել տեքստի տարբեր մասերն ու համապատասխան հարցերը,
- համապատասխանեցնել երկխոսությունները, կարճ պատմությունները, նկարագրությունները նկարներին, գծապատկերներին կամ խորհրդանշաններին,
- դասավորել մասնատված տեքստի խառը կտորները՝ ըստ տրամաբանական հերթականության,
- վերադասավորել մասնատված տեքստի խառը կտորները՝ հարցերի կամ նկարների օգնությամբ,
- ճիշտ համարակալել տեքստի խառը համարակալած առանձին նախադասությունները:

Տեքստի ունկնդրումից հետո.

- թվարկել հիմնական փաստերը,
- լսել տեքստի մի մասը և շարունակություն կամ ավարտ հորինել,
- լսել տեքստը և հակիրճ վերապատմել այն,
- լսել տեքստը և գտնել, ձևակերպել գլխավոր միտքը,
- կազմել ունկնդրած տեքստի պլանը :

Տեքստի ունկնդրումից հետո լրացնել տեքստի «քարտեզը», ասենք՝

- Ինչի՞ մասին է տեքստը:
- Ո՞վ է պատմում/շարադրում:
- Ո՞ւմ է հասցեագրված տեքստը (լսարանը) :
- Տեքստի ժանրը (պատմվածք, հեքիաթ, համառոտ վերապատմություն, երկխոսություն, պիես, երգիծանք և այլն):

Երկխոսություններ

Ստեղծվում են տարբեր իրադրություններ, երբ սովորողը պետք է շնորհակալություն հայտնի, համաձայնություն կամ անհամաձայնություն, խնդրանք, հրաման, առաջարկություն արտահայտի, կարծիք կամ կասկած հայտնի, ընդունի կամ մերժի առաջարկը, և այլն:

Առաջարկվում են անավարտ երկխոսություններ, որոնք պետք է ավարտել՝ լրացնելով այն խոսքային նմուշներով, որոնց ուսուցումը տվյալ դասի նպատակն է:

Այս կարգի երկխոսությունները, օրինակ՝ կարող են հիմնվել հարցական բառերով սկսվող հատուկ հարցերի և նրանց պատասխանների վրա: Յուրաքանչյուր հաջորդ հարցը կազմվում է նախորդ հարցին տրված պատասխանի հիման վրա:

Դասավանդողը տալիս է երկխոսության ընդհանուր ուրվագիծը, իսկ աշակերտներն ազատ են բառերի և արտահայտությունների ընտրության մեջ (օրինակ՝ առաջարկվում է հանպատրաստից երկխոսություն վարել, ասենք՝ տանտեր և հյուր, բժիշկ և հիվանդ, զբոսաշրջիկ և տեղացի բնակիչ, ուսուցիչ և աշակերտ զույգերի միջև):

Դասավանդողը տալիս է միայն երկխոսության առաջին երկու ռեպլիկը: Զույգերը պետք է զարգացնեն և ավարտեն երկխոսությունը:

Դերախաղեր

Դասավանդողը նախօրոք պատրաստում է ուսումնասիրվող թեմային առնչվող որևէ իրավիճակին բնորոշ հնարավոր երկխոսությանը հարմար բառեր և արտահայտություններ: Աշակերտներն աշխատում են զույգերով (օրինակ՝ տանտեր և հյուր, բժիշկ և հիվանդ, զբոսաշրջիկ և տեղացի բնակիչ, ուսուցիչ և աշակերտ, ուսուցիչ-աշակերտ, ուղևոր-վարորդ և այլն)՝ երկխոսություններ կազմելով տրված բառերով ու արտահայտություններով:

Մեկ այլ տարբերակում, երբ աշակերտներն արդեն փորձ ձեռք կբերեն, կարելի է խաղարկել իրադրությունները՝ առանց բառեր և արտահայտություններ տալու:

Օրինակ՝

- էքսկուրսավար-զբոսաշրջիկներ,
- թարգմանիչ-հանդիպման մասնակիցներ,
- տեղեկատվության որոնում զբոսաշրջության կենտրոնում կամ գործակալությունում (գործակալ-զբոսաշրջիկ),
- հեռախոսային երկխոսություններ և այլն:

Առաջարկվում է մի որևէ իրի վաճառքի համար գովազդ պատրաստել: Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով: Յուրաքանչյուր խումբ գրում է իր գովազդը, այնուհետև՝ ներկայացնում: Քվեարկության միջոցով որոշվում է ամենալավ գովազդը:

Նախապես աշակերտներին է տրվում բառերի կամ հասկացությունների ցանկ (օրինակ՝ արշավ, փող, համակարգիչ, արև, արձակուրդը ծովափում, արձակուրդը լեռնային վայրում և այլն): Դասարանը բաժանվում է երկու թիմի: Մի թիմը խոսում է տվյալ հասկացության միայն առավելությունների ու լավ կողմերի, իսկ մյուսը՝ միայն թերությունների և վատ կողմերի մասին:

Աշակերտներին առաջարկվում է տարբեր հարցազրույցներ վարել՝ դրանց համար նախապես հարցեր նախապատրաստելով՝

- ընթերցած պատմության հեղինակի/հերոսների հետ,
- դասընկերների, ուսուցիչների հետ,
- ծնողների, ընտանիքի անդամների հետ,
- արտասահմանյան հյուրերի հետ և այլն:

Բեմականացումներ

Աշակերտներին առաջարկվում է.

- բեմադրել տրված երկխոսությունները,
- փոքրիկ, զվարճալի պատմությունները (ասենք՝ անեկդոտներ) վերածել երկխոսության և բեմադրել:

Դասարանը բաժանվում է երեքական աշակերտներով խմբերի: Մի աշակերտը ներկայացնում է մյուս աշակերտին: Դերերն անընդհատ փոխվում են, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ իմանա ներկայացնել և ներկայացվել:

Աշխատանքը կատարվում է զույգերով: Զրուցակիցները իրարից ինչ-որ բան են խնդրում, ասվում է շնորհակալություն, որին հետևում է շնորհակալության պատասխանը:

Աշխատանքը կատարվում է զույգերով: Մի աշակերտը մի որևէ ակնհայտ սուտ տեղեկատվություն է տալիս: Մյուս աշակերտը արտահայտում է իր անհամաձայնությունը տարբեր արտահայտչամիջոցներով: Մյուս աշակերտը մի որևէ ճիշտ, հավաստի տեղեկատվություն է տալիս, որի հետ տարբեր արտահայտչամիջոցներով համաձայնում է երկրորդ աշակերտը:

Ինչ կանես, եթե լինես Փարիզում

Այս աշխատանքով օտար լեզվի և աշխարհագրության միջառարկայական կապ է ստեղծվում: Տրվում են նախօրոք պատրաստված հարցեր : Պատասխանները ակնկալում են և՛ բայական համապատասխան ժամանակների գործածության կարողություն, և՛ աշխարհագրական տեղեկությունների իմացություն: Աշխատանքը կատարվում է զույգերով:

Մենախոսության կարողությունները զարգացնող գործունեություն

Նկարագրել որևէ առարկա կամ երևույթ՝ պահպանելով տրված որոշակի կառույցը, կաղապարը կամ հաջորդականությունը: (Օրինակ՝ նկարագրել առարկան հետևյալ հաջորդականությամբ՝ անվանել առարկան, նրա հատկանիշները, առանձնահատկությունները, բնորոշ գործողությունները և այլն):

Աշխատանք նկարների շուրջ

- նկարագրել նկարը,
- խոսել նկարի բովանդակության մասին,
- վերականգնել խառնված հերթականությունը,
- հիմնվելով նկարի բովանդակության վրա՝ երևակայել, ենթադրել այն, ինչ պատկերված չէ նկարում,
- պատմության նկարազարդված առանձին դրվագների հիման վրա վերականգնել ամբողջական պատմությունը կամ պատկերը,
- նկարների հիման վրա կռահել պատմության շարունակությունը:

Սա կոլեկտիվ պատմություն հորինելու հետաքրքիր վարժություն է: Առաջին աշակերտն ասում է պատմության առաջին նախադասությունը: Հաջորդը կրկնում է առաջինի նախադասությունը և ավելացնում է իրենը: Երրորդը կրկնում է առաջին երկուսին և ավելացնում է իրենը և այդպես շարունակ: Վերջին աշակերտը պատմում է հանպատրաստից հորինված ամբողջ պատմությունը: Այս խոսքային վարժանքը մեծապես նպաստում է ուշադրության և ստեղծագործ մտքի զարգացմանը:

Աշակերտները նստում են շրջանաձև: առաջինը սկսում է պատմությունը՝ ասելով 1 նախադասություն: Երկրորդն ավելացնում է դարձյալ մեկը՝ իր նախադասությունը սկսելով նախորդ նախադասության վերջին բառով: Վերջին աշակերտն աշխատում է ավարտել պատմությունը:

Աշակերտներին առաջարկվում է ներկայացնել, հաղորդել կարդացած, լսած պատմության կամ տեսած կինոնկարի հիմնական իրադարձություններն ու փաստերը՝ տրամաբանական հերթականությամբ:

Պաստառին գրվում են թեմային առնչվող բառապաշարը, դարձվածաբանական միավորները, լեզվական կաղապարները, քերականական կառուցվածքները, որոնց օգնությամբ աշակերտները տրված թեմայով բանավոր ելույթ են ունենում:

Տրված խառը նախադասություններից կառուցել այս կամ այն թեմային առնչվող կապակցված խոսք:

Տրված խառը նկարները դասավորել տրամաբանական հերթականությամբ և պատմություն հորինել:

Ընթերցանության կարողությունները զարգացնող գործունեություն

Ընթերցանությունից առաջ սովորաբար ներկայացվում են.

- նոր բառերն ու արտահայտությունները,
- ծանոթ քերականական կառուցվածքները,
- դրվում են տեքստն ընթերցելու նպատակներ :

Տեքստի բովանդակության, ժանրի, իրադարձությունների ընթացքի **վերաբերյալ կանխատեսումներ անել**՝ հիմք ընդունելով՝.

- վերնագիրը, թեման,
- հեղինակի անունը,
- նկարները, սխեմաները,
- բանալի-բառերը,
- տրված հարցերը,
- խառը հերթականությամբ տրված տեքստային միավորները,
- տեքստի գծապատկերը, բովանդակային «կմախքը»:

Աշակերտներին առաջարկվում է հորինել պատմության իրենց տարբերակը՝ ըստ տեքստում տեղ գտած նկարների կամ վերնագրի և այնուհետև, կարդալուց հետո այն համեմատում են բնօրինակի հետ:

Աշակերտներին ներկայացվում է տեքստի, պատմության գծապատկերը՝ համառոտագրություններով, այն քննարկվում է, նոր միայն սկսվում է տեքստի ընթերցումը :

Աշակերտներին առաջարկվում է տեքստն ընթերցելու ընթացքում գտնել և ընդգծել տեքստի բովանդակության համար առանցքային բառերը/պարբերությունները:

Աշակերտներին առաջարկվում է համեմատել և ճիշտ համակցել ու համադրել.

- տեքստի տարբեր մասերն ու համապատասխան նկարները, գծանկարները,
- կիսված նախադասությունների սկիզբն ու ավարտը,
- տեքստի տարբեր մասերն ու համապատասխան հարցերը:

Աշակերտներին առաջարկվում է շարադասել, վերադասավորել տեքստը՝ վերականգնելով նախադասությունների, պարբերությունների խառնված հերթականությունը.

- վերականգնել մասնատված տեքստի խառը կտորները՝ ըստ տրամաբանական հերթականության,
- վերադասավորել՝ հարցերի կամ նկարների օգնությամբ:

Տեքստի ընթերցումից հետո պատասխանել տրված տարաբնույթ հարցերին.

- բազմընտրական (տրվում է հարցը և պատասխանի մի քանի տարբերակ. առաջարկվում է դրանցից ընտրել ճիշտը),
- ճիշտ/սխալ (տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող ճիշտ և սխալ պնդումներ. առաջարկվում է տարբերակել դրանք),
- տրամաբանական (տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող հարցեր, որոնք նպատակ ունեն բացահայտել, ասենք՝ պատճառահետևանքային կապերը, գործողությունների տրամաբանական ընթացքը և այլն),
- տրված նախադասությունների մեջ գտնել այն, որն առանցքային է ընթերցած տեքստի համար,
- կարդալ տեքստը և առաջադրանքում տրված նախադասությունների մեջ նշել տեքստի բովանդակությանը համապատասխանողները:

Վերադասավորել/վերահամարակալել տեքստի խառնված նախադասությունները: Վերադասավորել մասնատված տեքստի մասերի տրամաբանական հաջորդականությունը հարցերի կամ նկարների օգնությամբ:

Գրելու կարողությունները զարգացնող գործունեություն

Աշակերտներին առաջարկվում է դուրս գրել և բացատրել անծանոթ բառերը, պատկերավոր արտահայտությունները, դարձվածքները, կազմել հոմանիշների, հականիշների, դարձվածների թեմատիկ բառախմբեր, սովորած բառերն ու բառակապակցությունները գործածել գրավոր խոսքում:

Աշակերտներին առաջարկվում է որոնել, ընտրել և մշակել տեղեկատվությունը, հիմնական տեղեկատվությունն առանձնացնել երկրորդականից, նկատել երևույթների հատկանիշները և օրինաչափությունները, համեմատել, զուգադրել և վերլուծել, քննադատաբար մոտենալ ընդունված տեսակետներին, եզրահանգումներ անել:

Այլ գրավոր առաջադրանքներ

Նախօրոք պատրաստված անձնական քարտի լրացում դասարանում:

Տոհմածառի պատկերում և նկարագրում:

Նամակագրություն՝ լեզվակիր երկրում ապրող հասակակիցների հետ:

Երկխոսությունների ավարտում:

Խաչբառային առաջադրանքներ:

Նկարի նկարագրում:

Վերադասավորել, ընդլայնել կամ համառոտել տրված նախադասությունները:

Լրացնել աղյուսակներ, գծապատկերներ՝ տրված կամ անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա:

Ինքնակենսագրություն (CV) կամ համառոտ կենսագրություն գրել:

Վերականգնել տեքստը կամ լրացնել տեքստի բացթողումները:

Տեքստ կազմել՝ տրված տրամաբանական-կառուցվածքային «կմախքի» հիման վրա:

Մամուլում հրապարակված հոդվածների հավաքածու կազմել տրված կամ նախընտրած թեմաներով:

Վերականգնել խառնված հերթականությամբ նախադասությունները և կապակցված տեքստ գրել:

Լրացնել ձևաթուղթ, հարցաթերթ:

Դիմում, բողոք կամ առաջարկ գրել:

Նկարների շարքի կամ նկարներով պատմության համար մակագրություններ գրել:

Սկսել կամ ավարտել կիսատ պատմությունը:

Գրավոր պատասխանել հարցերին:

Կազմել հորոսկոպներ:

Ստեղծել գովազդային պաստառներ, գրքույկներ:

Ձեզ ներկայացված առաջադրանքները մի քանի օրինակ են միայն ուսումնական գործունեության հնարավոր ձևերի բազմությունից: Սրանք ներկայացվում են սոսկ որպես առաջարկ, հուշում, որոնք դասավանդողները կարող են փոփոխել, զարգացնել, իրենց տարբերակները մշակել: « Մ.Գ. Աստվածատրյան, Ջ.Վ. Ավետիսյան, Ե.Լ. Երզնկյան և ուրիշներ **ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՖՐԱՆՍԵՐԵՆ, Հանրակրթական դպրոցի**
առարկայական չափորոշիչ և ծրագիր- ԵՐԵՎԱՆ 2007

Ուսուցման մեթոդներ

Յուրաքանչյուր ուսուցիչ, մինչ դասարան մտնելը, ինքն իրեն հարց է տալիս, թե ո՞րն է տվյալ դասի նպատակը և ի՞նչ պետք է սովորեցնի նա աշակերտին, ինչու և ինչպես :

Ուսուցման մեթոդը (հունարեն - metodos՝ճանապարհ ինչ -որ տեղ, ինչ- որ բանի տանող) մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Մեր օրերում շատ է խոսվում ուսուցման փոխներգործուն մեթոդների մասին

Փոխներգործուն մեթոդների կիրառումը ինքնանպատակ չէ: Դրանք նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Փոխներգործուն մեթոդները ենթադրում են աշակերտների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, ինչպես նաև ուսուցման պրոցեսում սովորողների ակտիվության գերակայություն): Փոխներգործուն դասերում ուսուցչի դերը հանգում է սովորողների գործունեությունն ուղղորդելուն:

Փոխներգործուն դասերի հիմնական բաղադրատարրերը սովորողների կողմից կատարվող փոխներգործուն վարժություններն ու առաջադրանքներն են:

Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը սովորական առաջադրանքներից այն է.,որ կատարելով դրանք՝ աշակերտները ոչ միայն ամրապնդում են ուսումնասիրած ուսումնական նյութը, այլ ուսումնասիրում են նոր նյութ:

Դասապրոցեսը պետք է կազմակերպել այնպես, որ սովորողը կարողանա կարծիք հայտնել, հիմնավորել իր կարծիքը, կարողանա լսել և հարգել խմբի անդամների կարծիքը, կարողանա մասնակցել քննարկումների և եզրահանգումներ անել քննարկվող հարցերի շուրջ

Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն: Ցանկացած մեթոդ լավ է, եթե այն ճիշտ է ընտրված և ծառայում է ուսումնական նյութի մատուցմանը:

Ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն այն չի կարող կամայական բնույթ կրել: Մեթոդները ընտրելիս անհրաժեշտ է հստակ պատկերացնել.

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը (քանակը) և բարդությունը,
- սովորողների շահագրգռվածությունը,
- սովորողների տարիքն ու աշխատունակությունը,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,
- նախորդ դասերին կիրառված մեթոդները,
- ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը,
- ուսուցիչ- աշակերտ հարաբերությունները,
- սովորողների թվաքանակը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Մեթոդների կամ մեթոդական հնարների կիրառումը միջոց է դասի նախապես ծրագրված նպատակին հասնելու համար:

Կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճահապարհ, և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը:

Ավելին, առաջարկված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մոթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրեր կամ հարմարացնել դասացուցակը՝ կազմելով կրկնակի ժամեր:

Ինտերակտիվ մեթոդների առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
- աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ,
- նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել , ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Փոխներգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար (ՓԳՀԱԿՄՀ)

Իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդական հնար է, որը օգնում է աշակերտին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

Այս մեթոդի էությունն է, որ կարդալիս արվում է փոխներգործուն գրառումներ հետևյալ նշաններով

V -գիտեմ
- իմ իմացածին հակասում է
+ նոր տեղեկություն է
? անհասկանալի է, շփոթեցնող
! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Կարդալու ընթացքում հարկավոր է լուսանցքում տեղադրել այդ նշանները՝ ըստ նյութի՝ ձեր իմացության և պատկերացման: Կարիք չկա բոլոր տողերում նշաններ անել:

Ընդհանուր առմամբ այս գրառումները արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

Ընթերցումից ստացված տեղեկությունը դասակարգելու համար աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով:

V	-	+	?	!

Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Եթե փորձենք համեմատել Վենի դիագրամը Տ-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու (երեք...) հասկացությունների ընդհանրությունները և շեշտադրվում են յուրաքանչյուրի բնորոշ հատկանիշները:



Սա ևս անհատապես կամ խմբով կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընդհանրություններն ու առանձնահատկությունները նշելիս աշակերտներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել: Երբեմն, այնուամենայնիվ, դիագրամի շրջանաձև տարածքները կամ ընդհանրությունների համար նախատեսված հատման մասը չեն բավարարում մտքերը լիարժեք գրի առնելու համար: Սա չպետք է խանգարի տեխնիկան կիրառելիս ծնված բոլոր մտքերը գրանցելուն: Այս դեպքում Վենի դիագրամը կարող է փոքր ինչ այլ գծապատկերով հանդես գալ:

Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացության համեմատության համար), այնպես էլ՝ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):

Այն կարևոր համակարգող դեր ունի և օգտագործվում է դասի ամփոփիչ փուլերում, նյութի ընդհանրացման և ամփոփման նպատակով և կիրառելի է բոլոր առարկաների համար:

Տ-աձև աղյուսակ

Տ-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՝ կազմակերպական ձևով, և՝ կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով Տ տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս՝ թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար:

Մտագրոհ կամ մտքերի տարափ

Մտագրոհը խմբի անդամների միջև փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ:

Այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները գրի են առնվում գրատախտակին: Ամեն միտք, թեկուզ անվստահ և վախվորած՝ խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական:

Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարները արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ խմբով քննարկվում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնությունները քննարկում, շտկում: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է:

Քառաբաժան

Պարզագույն մեթոդական հնար է, որը հատկապես հարմար է կիրառել ցանկացած տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով աշխատելիս կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ (գրատախտակ...), որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Ստորև ներկայացված է քառաբաժան աղյուսակի երկու ձև: Դրանք փորձարկված են, բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, հետևաբար, նպատակահարմար չէ դրանք փոփոխել կամ առաջարկել այլ առաջադրանքներ:

Ա)

Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս:	Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:

Կապը ձեր կյանքի հետ	Նոր վերնագիր

Բ)

Ի՞նչ ձայներ լսեցիք:	Երկու բանալի բառ
Պատմվածքի թեման սեփական բառերով:	Պատմվածքի տրամադրությունը:

Քառաբաժան աղյուսակի վերը ներկայացված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել՝ սկսելով վերևի աջ անկյունից և շարժվելով ժամացույցի սլաքին հակառակ

ուղղությամբ: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին: Հնարավոր է, որ ըստ ուսումնասիրվող նյութի կարևորվի տեքստի, պատմվածքի կամ նյութի որոշակի տեսանկյունով դիտարկումը, ինչը կնպաստի, որ հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժնի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ կառանձնացվեն, կներկայացվեն և կքննարկվեն:

Դասի պլանի օրինակ

Թեմա՝ Դաս 9 Ընտանեկան ալբոմ, տեքստ «Մարտենների ընտանիքը»:

Նպատակը՝ ներկայացնել ընտանիքի անդամներին, նրանց մասնագիտությունները, տանը ունեցած պարտականությունները:

Կարողություններ, հմտություններ՝ կարողանալ խոսել ընտանիքի անդամների, նրանց մասնագիտությունների,տանը ունեցած պարտականությունների, ընտանեկան հավաքների մասին, համեմատել հայ և ֆրանսիացի ընտանիքները:

Դասի ընթացքը՝**1. Խթանման փուլ**

Մեթոդը՝ Մտագրոհ:

Նպատակը՝ Սովորողներին ներգրավել դասին՝ հետևյալ հարցադրումնե-
ի միջոցով.

1.Նշեք հայ ընտանիքը բնութագրող մի քանի հատկանիշ:

2.Ձեր նշած հատկանիշներից որոնք են բնութագրական ձեր ընտանիքի համար:

3.Ինչ գիտեք ֆրանսիական ընտանիքի մասին:

Պատասխանները գրել պաստառին կամ գրատախտակին:

Խմբավորել պատասխանները: Ընտրել 2-3 բնութագրաումներ հայ, 2-3 բնութագրումներ էլ ֆրասիական ընտանիքի համար:

2. Իմաստի ընկալման փուլ

Մեթոդը՝ Փոխներգործուն նշանների մեթոդ

Նպատակը՝ համեմատել ունեցած տեղեկատվությունը նոր կարդացածի հետ՝ համապատասխան նշումներ կատարելով: Առանձնացնել այն մտքերը,որոնք կարելի է քննարկել:

Ունկնդիրներին բաժանել խմբերի և խմբերով աշխատել « Մարտենների ընտանիքը » տեքստի վրա: Խմբերը աշխատում են հետևյալ սկզբունքով.

-խմբի ներսում նախ աշխատում են առանձին-առանձին, հետո քննարկում են բոլորի մտքերը և խումբը ներկայացնում է մեկ ընդհանուր կարծիք,

-առանձնացնում են անծանոթ և քննարկման ենթակա մտքերը,

-խմբերի ներկայացման ժամանակ անհրաժեշտ գրառումներ են արվում պաստառի վրա՝առանց քննարկումների,

-երբ բոլոր խմբերը ավարտում են, ծավալվում է քննարկում անծանոթ և քննարկման ենթակա մտքերի շուրջ,

-մինչև վերջ պարզաբանվում են բոլոր հարցերը:

Սեմինարավարի խնդիրն է քննարկումը ուղղորդել և պարզաբանումները կատարել այնպես, որ մասնակիցների համար քննարկվող բոլոր հարցերը ստանան սպառիչ պատասխաններ:

3.Կշռադատման փուլ

Մեթոդը՝ Վենի դիագրամ,

10 րոպեանոց շարադրություն:

Նպատակը՝ Ամփոփել կատարված աշխատանքը և ներկայացնել աշխատանք՝
կարողանալով համեմատել հայ և ֆրանսիական ընտանիքները:

Վենի դիագրամի միջոցով պարզաբանվում են երկու ազգի ընտանիքների առանձնահատկությունները և նմանությունները: Աշխատանքը կատարվում է բոլորի ակտիվ մասնակցությամբ:

Այնուհետև խմբերին հանձնարարվում է գրել 10 րոպեանոց շարադրություն՝ կարճ բնութագրելով հայ և ֆրանսիական ընտանիքները:

Խմբում նախ աշխատում են առանձին- առանձին, հետո քննարկում են բոլորի աշխատանքները: Քննարկման արդյունքում կամ ներկայացնում են լավագույն շարադրությունը կամ բոլորի շարադրություններից ստեղծում են նորը: Հետո յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի հավաքական շարադրությունը: Եթե խմբում կա հատուկ կարծիք ունեցող, նա առանձին կարող է ներկայացնել իր աշխատանքը:

Գնահատումը կարելի է կատարել դասարանի ակտիվ մասնակցությամբ: Գնահատվում են բոլոր խմբերի աշխատանքները:

Գնահատում

Գնահատման հիմնական սկզբունքները

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի **գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը:**

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Գնահատման հիմնական սկզբունքները.

- օբյեկտիվություն,
- արդարություն,
- հուսալիություն,
- անկողմնակալություն,
- հավաստիություն,
- հիմնավորվածություն,
- մատչելիություն:

Գնահատման միջոցով որոշում ենք, թե ինչի է հասել սովորողն ուսուցման տվյալ աստիճանում, այսինքն՝ ***ի՞նչ է սովորել, ի՞նչ գիտի և ի՞նչ կարող է անել:*** Հարցադրումների այս եռյակում ամենագլխավորը վերջինն է:

Լեզուների ուսուցման արդյունքների գնահատումը ենթադրում է խոսքային կարողությունների ձևավորման, հաղորդակցության տիրապետման չափանիշների ճշգրտում (Տես՝ Միջին մասնագիտական հաստատության սովորողին ներկայացվող նվազագույն պահանջները):

Խոսքային գործունեության տեսակների թեստավորում

Ընթերցել-հասկանալ

Գործունեության այս տեսակին օտար լեզուների դասավանդման մեջ միշտ շատ մեծ տեղ է հատկացվել, կարելի է նույնիսկ ասել, որ այն գերիշխող է եղել: Տարբերում ենք ընթերցանական հմտությունների տարբեր մակարդակներ: Տարբերում ենք ընթերցանության հետևյալ տեսակները.

- ընթերցել տեքստի ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար,
- ընթերցել տեքստից տեղեկություններ ստանալու համար,
- ընթերցել տեքստը ամենայն մանրամասներով ըմբռնելու համար:

Վերը նշված պահանջներին համապատասխան էլ հարկավոր է կազմել թեստերը:

Ընթերցանական հմտությունները ընդունված է ստուգել թե՛ բանավոր և թե՛ գրավոր: Հիմնականում կիրառվում են հետևյալ առաջադրանքները.

- բազմակի ընտրություն,
- բաց թողած բառերով առաջադրանքներ,
- հարց (բաց, փակ) – պատասխան,
- պարզ վերարտադրություն,
- տեքստի բովանդակության պլանի կազմում,
- տեքստի խառը հատվածները ճիշտ հաջորդականությամբ դասավորում:

Ունկնդրել-հասկանալ

Այս հմտությունը նույնպես ստուգվում է և գրավոր և բանավոր պատասխանների միջոցով: Այստեղ ևս հարկ է տարբերել ունկնդրման տարբեր մակարդակներ և համապատասխան առաջադրանքներ.

- լսել և հասկանալ ընդհանուր բովանդակությունը,
- լսել տեղեկություններ ստանալու համար,
- լսել և հասկանալ խոսքն ամենայն մանրամասներով:

Առաջադրանքների հիմնական տեսակներն են.

- բազմակի ընտրություն,
- այո / ոչ,
- ճիշտ / սխալ / տեքստում չկա,
- կարճ պատասխան,
- ձևաթղթի լրացում,
- կատարել հրահանգը (պատասխանի փոխարեն կատարել գործողությունը):

Խոսել (բանավոր հաղորդակցում)

Խոսելու հմտության ձևավորումը պետք է թերևս ամենակենտրոնական տեղը զբաղեցնի օտար լեզվի դասավանդման մեջ: Սովորողը ծրագրի շրջանակներում մենախոսությունների և երկխոսությունների ձևով պետք է կարողանա խոսակցին հաղորդել և նրանից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: Խոսելու հմտություններ զարգացնելու և ստուգելու նպատակով շատ կիրառական են առաջադրանքների հետևյալ տեսակները

* հարցազրույց,
- երկխոսություն,
- թեմատիկ / իրադրային զրույց,
- մենախոսություն (ներկայանալ, պատմել, փոխադրել) տեքստի կամ նկարի շուրջ,
- նախապատրաստած ելույթ (պրեզենտացիա):

Բանավոր խոսքը ձևավորող կամ ստուգող թեստերը չեն ենթադրում գրավոր պատասխաններ: Պատասխանները տրվում են միայն բանավոր: Ուսուցիչը հարցումը կատարում է փոքր խմբերով.

- սովորողը խոսում է ուսուցչի հետ (հեշտ է հետևել և գնահատել, բայց պասիվ են մյուս սովորողները),
- սովորողը խոսում է մեկ այլ սովորողի կամ սովորողների հետ (դժվար է բոլորին միաժամանակ լսել և գնահատել, բայց մասնակցում և միանգամից գնահատվում են մի քանի սովորողներ):

Գրել (գրավոր հաղորդակցում)

- նախօրոք պատրաստված անձնական քարտի լրացում դասարանում, տոհմածառի պատկերում և նկարագրում,
- նամակագրություն՝ լեզվակիր երկրում ապրող հասակակիցների հետ,
- երկխոսությունների ավարտում,
- խաչբառային առաջադրանքների կատարում,
- նկարի նկարագրում,
- տրված նախադասությունների վերադասավորում, ընդլայնում կամ համառոտում,
- ինքնակենսագրություն (CV) կամ համառոտ կենսագրություն:

Հավելված 6

Առաջադրանքների տեսակները

Բազմակի ընտրության առաջադրանքի յուրաքանչյուր հարցի կամ ասույթի տակ առաջարկվում է պատասխանի 3 կամ 4 տարբերակ: Հարցադրումները ձևակերպվում են հիմնականում 2 մոտեցմամբ.

ա) Տրված պատասխաններից ո՞րն է համապատասխանում տեքստի բովանդակությանը (պետք է գտնել միակ ճիշտ պատասխանը):

բ) Տրված պատասխաններից ո՞րը չի համապատասխանում տեքստի բովանդակությանը (պետք է գտնել միակ սխալ պատասխանը):

Տվյալ առաջադրանքի կատարումը պահանջում է համապատասխան թեմայի շրջանակում որոշակի ակտիվ և պասիվ բառապաշարի, ինչպես նաև քերականության իմացություն: Կարևոր է նաև շարահյուսական կառույցները փոխակերպելու կարողությունը, քանի որ և ճիշտ և սխալ պատասխանները հաճախ տրված են փոխակերպված: Փոխակերպման բնույթի սահմանափակումներ չկան: Գրեթե բոլոր տեքստերը ունեն երկրագիտական և ճանաչողական արժեք: Այս առաջադրանքների ստուգումն ու գնահատումը ոչ մի դժվարություն չի ներկայացնում:

Բաց թողած բառերով առաջադրանքներում տեքստը տրված է մի շարք բացթողումներով: Աշակերտը պետք է լրացնի բաց թողած բառերը: Բաց թողած տեղերը կարող են լրացվել՝ գրելով համապատասխան բառերը կամ պատասխանն ընտրելով մի քանի տարբերակներից: Այս առաջադրանքները նույնպես կազմվում են երկու հիմնական մոտեցմամբ.

ա) չփոփոխվող բաց թողած բառերով տեքստեր,

բ) փոփոխվող բաց թողած բառերով տեքստեր:

Օբյեկտիվ և կիսաօբյեկտիվ հարցերի դեպքում աշակերտից չի պահանջվում շատ գրել, դրանք հեշտ է գնահատել և հեշտ է արդյունքները վերլուծել: Սակայն դժվար է լավ հարցեր կազմելը և դրանցով դժվար է գնահատել ավելի բարձր մակարդակի հմտությունները: Այստեղ անխուսափելի են նաև պատահականության սկզբունքով ընտրված ճիշտ պատասխանները:

Շարադրությունների դեպքում հեշտ է սահմանել առաջադրանքը, հնարավոր է ստուգել ավելի բարձր մակարդակի հմտություններ, գրեթե բացառվում է պատահական ճիշտ պատասխանը, բայց դժվար է արժանահավատ գնահատել՝ բացառել սուբյեկտիվության գործոնը: Սրանցում հստակ չի տարբերակվում ամփոփվող ծրագրային նյութը և աշակերտից պահանջվում է շատ գրել:

Թեստի կառուցման կանոնները

Նախքան թեստը գրելը անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

-Ու՞մ եմ թեստավորում:
-Ինչո՞ւ եմ թեստավորում:
-Ե՞րբ եմ թեստավորում:
-Ի՞նչ թեմա կամ թեմաներ եմ ընդգրկում:
-Ի՞նչ հմտություններ եմ ստուգում:
-Քանի՞ առաջադրանք եմ տալիս:
-Ինչպիսի՞ հարցեր եմ ընդգրկում -հարցերի տեսակները, կառուցվածքը:
-Բարդության աստիճանը ինչպիսի՞ն է:
-Հարցերի կշիռը ինչպիսի՞ն է:
-Ինչպե՞ս բաշխել միավորները:
-Ինչպե՞ս գնահատել:
-Ինչպե՞ս արժևորել:
-Որքա՞ն ժամանակ հատկացնել:
-Որո՞նք պետք է լինեն կոնկրետ այս թեստի բնութագրերը:

- **Թեստ կազմելիս պետք է խուսափել երկիմաստ հարցերից և երկիմաստ պատասխաններից:**

Ինչպես ապահովել թեստի դրական արդյունք բոլոր աշակերտների համար

- կարդացեք թեստը բարձրաձայն,
- բացատրեք այլ նախադասություններով,
- խնդրեք, որ աշակերտները կրկնեն,
- տվեք այլընտրանքային թեստ՝ թելադրություն, բանավոր հարցում, և այլն,
- ապահովեք ժամացույցի առկայությունը դասարանում, որպեսզի աշակերտները կարողանան վերահսկել իրենց աշխատանքը,
- բերեք օրինակներ յուրաքանչյուր տեսակի հարցերի համար՝ բանավոր և գրավոր,
- բավականաչափ տեղ թողեք հարցի պատասխանը գրելու համար,
- գնացեք կոնկրետից դեպի վերացականը,
- *եթե ձեր ստուգման առարկան չի վերաբերում ուղղագրությանը կամ քերականությանը, ապա այդ տիպի սխալների համար գնահատականը մի իջեցրեք,*
- թույլ տվեք աշակերտներին օգտվել գրառումներից ու դասագրքից (գրեք թեստ բաց գրքի ուղեկցությամբ),
- աշխատեք աշակերտի լրացնելուց հետո անմիջապես անդրադառնալ նրա աշխատանքին,
- հարցերի յուրաքանչյուր խմբի համար հաշվարկեք միասնական միավոր արժեք,
- խուսափեք մի քանի կետերով հարցերից :

Հավելված 7

Թեստերի նմուշներ

Test 1

A. Ecoute le texte et trouve la bonne réponse.

1.*L'auteur demande pardon parce qu' il a dédié son livre*

a) à un enfant. O
b) à une grande personne. O
c) à un étudiant. O

2.*Cette grande personne*

a) est son meilleur ami. O
b) est son ami. O
c) est son professeur. O

3.*Son meilleur ami*

a) a besoin de livres. O
b) a besoin d' être consolé. O
c) a besoin d'amis. O

4.*Cette grande personne peut comprendre*

a) les livres pour enfants. O
b) les livres pour les grands. O
c) les problèmes de math. O

5.*Les grands oublient souvent*

a) qu'ils ont été autrefois des étudiants. O
b) qu'ils sont maintenant des parents. O
c) qu'ils ont d'abord été des enfants. O

Թեստի հատկորոշիչ

Թեստ 1

Առարկա՝ Ֆրանսերեն:
Թեմա՝ Անտուան դը Սենտ Էկզյուպերի «Փոքրիկ իշխանը»:
Նպատակ՝ պարզել ունկնդրելով հասկանալու և լսածին արձագանքելու կարողության մակարդակը:

Հատկորոշիչների աղյուսակ

Առաջադրանք	Ներկայացման ձևը	Բարդության աստիճանը	Ստուգվող ունակությունները	Միավորը
1	բը	մ	ունկնդրելով	2
2	բը	մ	հասկանալու և լսածին	2
3	բը	մ	արձագանքելու	2
4	բը	մ	կարողություն	2
5	բը	մ		2
				10

բը- բազմակի ընտրություն
մ- միջին

Թեստի տեսակը՝ հայտորոշիչ:
Առավելագույն միավորների քանակը՝ 10:
Տևողությունը՝ 20--25 րոպե:
Առաջադրանքների թիվը՝ 5:

Պատասխանների աղյուսակ

Հարցեր	Ճիշտ պատասխան	Տրվող առավելագույն միավորների քանակը
1	b)	2
2	a)	2
3	b)	2
4	a)	2
5	c)	2

Pour le professeur

Le petit prince

A Léon Werth

Je demande pardon aux enfants d'avoir dédié ce livre à une grande personne. J'ai une excuse sérieuse: cette grande personne est le meilleur ami que j'ai au monde. J'ai une autre excuse: cette grande personne peut tout comprendre, même les livres pour enfants.J'ai une troisième excuse: cette grande personne habite la France où elle a faim et froid.Elle a bien besoin d' être consolée. Si toutes ces excuses ne suffisent pas, je veux bien dédier ce livre à l'enfant qu'a été autrefois cette grande personne. Toutes les grandes personnes ont d'abord été des enfants?(Mais peu d'entre elles s'en souviennent). Je corrige donc ma dédicace:

A Léon Werth
quand il était petit garçon
Antoine de Saint – Exupéry

Test 2

Reconstitue le texte brouillé dans le bon ordre. Ecris la lettre désignant chacune des parties du texte reconstitué dans les cages 1-5 du tableau des réponses.

A. Le soir, je regarde un tout petit peu la télé et j'appelle mes amis. Je m'endors tôt, vers 22h. 30: je dors neuf à dix heures par nuit.

B. De 9 heures à 11 heures, je m'entraîne puis je vais déjeuner. A 15 heures, je retourne à l'entraînement. Je joue jusqu'à 17 heures. Au total, je fais trois ou cinq heures de tennis par jour.

C. Je dors jusqu'à midi. Je vais à la plage ou je me promène en bateau.
Le reste de la semaine, pas de folies!

D. Je me lève vers 7 h. 30 tous les matins.Je fais ma toilette et je prépare mes vêtements. Ensuite, je m'habille et je prends mon petit déjeuner: fruit, yaourt, céréales et jus d'orange.

E. Ensuite, je fais deux heures de musculation. Ma journée se termine vers 19 heures. Généralement, je rentre chez moi. Le samedi, je sors parfois avec des amis au restaurant. Le dimanche, je suis libre.

	1	2	3	4	5
Texte reconstitué					

Թեստի հատկորոշիչ

Թեստ 2

Առարկա՝ Ֆրանսերեն:
Թեմա՝ Օրվա ռեժիմ,
Սպորտ:
Նպատակ՝ 1.Պարզել տեքստի առանձին մասերի մեջ տրամաբանական կապը գտնելու կարողությունների մակարդակը:

Հատկորոշիչների աղյուսակ

Առաջադրանք	Ներկայացման ձևը	Բարդության աստիճանը	Ստուգվող ունակությունները	Միավորը
1	կպ	մ	տեքստի առանձին մասերի մեջ տրամաբանական կապը գտնելու կարողություններ	10(5 x 2)
				10

կպ-կարճ պատասխան

Թեստի տեսակը՝ հայտորոշիչ:
Առավելագույն միավորների քանակը՝ 10:
Տևողությունը՝ 10--15 րոպե:
Առաջադրանքների թիվը՝ 1:
Հատվածների թիվը՝ 5:

Պատասխանների աղյուսակ

Հարցեր	Ճիշտ պատասխան	Տրվող առավելագույն միավորների քանակը
1	**D**. Je me lève vers 7 h. 30 tous les matins.Je fais ma toilette et je prépare mes vêtements. Ensuite, je m'habille et je prends mon petit déjeuner: fruit, yaourt, céréales et jus d'orange.	2
2	**B.** De 9 heures à 11 heures, je m'entraîne puis je vais déjeuner. A 15 heures, je retourne à l'entraînement. Je joue jusqu'à 17 heures. Au total, je fais trois ou cinq heures de tennis par jour.	2
3	**E.** Ensuite, je fais deux heures de musculation. Ma journée se termine vers 19 heures. Généralement; je rentre chez moi. Le samedi, je sors parfois avec des amis au restaurant. Le dimanche, je suis libre.	2
4	. **C.** Je dors jusqu'à midi. Je vais à la plage ou je me promène en bateau. Le reste de la semaine, pas de folies!	2
5	**A**. Le soir, je regarde un tout petit peu la télé et j'appelle mes amis. Je m'endors tôt, vers 22h. 30: je dors neuf à dix heures par nuit.	2
		10

Test 3

Aline écrit une lettre à son ami Michel pour refuser son invitation à Paris,
Continue la lettre d'Aline à son ami en utilisant les mots et les expressions donnés.

-reconnaissance (merci pour....)
- regret (malheureusement, je le regrette beaucoup....)
- sympathie (tu es gentil, aimable....)
- remerciement.(je te remercie, je t'embrasse.....)

Cher...,
Je----------

Je t'embrasse...

Թեստի հատկորոշիչ

Թեստ 3

Առարկա՝ Ֆրանսերեն:
Թեմա՝ Նամակ:
Նպատակ՝ պարզել նամակ գրելու, (սկսել, շարադրել բուն նյութը, ավարտել), փաստարկելու կարողությունների մակարդակը:

Հատկորոշիչների աղյուսակ

Առաջադրանք	Ներկայացման ձևը	Բարդության աստիճանը	Ստուգվող ունակությունները	Միավորը
1	ըպ	մ	նամակ գրելու ունակություններ և կարողություններ	24

ըպ- ընդարձակ պատասխան

Թեստի տեսակը՝ ամփոփիչ:
Առավելագույն միավորների քանակը՝ 24:
Տևողությունը՝ 20-25 րոպե:
Առաջադրանքների թիվը՝ 1:
Ծավալը՝ 40-45 բառ:

Չափանիշների աղյուսակ

Հարցեր	Ճիշտ պատասխան	Տրվող առավելագույն միավորների քանակը
1	**Հաղորդակցական խնդրի լուծում (բովանդակություն)**	
	1.Աշխատանքը լիովին համապատասխանում է թեմային, բովանդակությունն արտացոլում է բոլոր առաջադրված պահանջները և պահպանված են նամակ գրելու (սկսել, շարադրել բուն նյութը, ավարտել) բոլոր կանոնները, ձևավորված է ճիշտ ոճով:	3
	2.Աշխատանքը համապատասխանում է թեմային, պահպանված են նամակ գրելու (սկսել, շարադրել բուն նյութը, ավարտել) կանոնները, սակայն առաջադրված որոշ պահանջներ չեն կատարված, առկա են որոշ ոճական սխալներ :	2
	3.Աշխատանքը մասամբ համապատասխանում է թեմային, բայց կառուցվածքը (սկսել, շարադրել բուն նյութը, ավարտել)հստակ պահպանված չէ, բովանդակությունը չի արտացոլում առաջադրված բոլոր պահանջները, հաճախակի են ոճական խախտումները :	1
	4Աշխատանքը չի համապատասխանում թեմային, առաջադրված պահանջները կատարված չեն, կան անհասկանալի և անհեթեթ	0

	նախադասություններ:	
2	**Տեքստի կառուցվածք**	
	1.Աշխատանքը հասցված է իր տրամաբանական ավարտին, համապատասխանում է ֆրանսերենի գրավոր խոսքին հատուկ նորմերին(CV, նամակ, բացիկ և այլն):	3
	2.Աշխատանքը տրամաբանորեն ճիշտ է կառուցված, ավարտուն է, բայց խնդիրը համապատասխան պարզաբանում չի ստանում՝ շարադրանքի կարճ լինելու պատճառով:	2
	3.Աշխատանքը ավարտուն չէ, խնդիրը լավ չի պարզաբանվում, կառուցվածքը անտրամաբանական է , առկա են բազմաթիվ սխալներ:	1
	4. Աշխատանքն անավարտ է, դրա պատճառով էլ զուրկ է տրամաբանությունից և անհասկանալի է:	0.
3	**Բառապաշար**	
	1.Օգտագործված բառապաշարը համապատասխանում է առաջադրված պահանջին, չկան բառապաշարի օգտագործման սխալներ:	3
	2.Օգտագործված բառապաշարը համապատասխանում է առաջադրված պահանջին, սակայն առկա են բառօգտագործման անճշտություններ, բառապաշարը սահմանափակ է:	2
	3. Օգտագործված բառապաշարը բավական սահմանափակ է, բառօգտագործման սխալները հաճախակի են և խանգարում են տեքստի ընկալմանը:	1
	4.Բառապաշարի սահմանափակ լինելու պատճառով առաջադրանքը չի կատարվել:	0
4	**Քերականություն**	
	1.Ճիշտ են օգտագործված քերականական բոլոր կառույցները և ուղղագրական ու կետադրական սխալներ չկան:	3
	2.Կան 1-2 բառաքերականական,ուղղագրական և կետադրական սխալներ, որոնք չեն խոչընդոտում տեքստի ընկալմանը:	2
	3.Կան 5-ից ավելի բառաքերականական, նույնքան ուղղագրական և կետադրական սխալներ, որոնք դժվարացնում են տեքստի ընկալումը:	1
	4. Կան 7-ից ավելի.բառաքերականական,ուղղագրական և կետադրական սխալներ:	0

Test 4

A.*Lis le texte.*

Le Goncourt

Le Goncourt est le plus célèbre des prix littéraires français.

Les frères Goncourt, Edouard et Jules, deux écrivains de la fin du 19-ième siècle, donnèrent à leur mort toute leur fortune (հարստություն) à une Académie de dix membres dont la principale fonction devait être de choisir chaque année un romancier inconnu et de lui attribuer (հանձնել) un prix de cinq mille francs-or. Ils espéraient par ce moyen aider les jeunes écrivains.

A partir 1903 les dix académiciens se réunirent chaque automne à Paris au restaurant Drouant (Place Gaillon) pour décerner (շնորհել) le prix Goncourt à l'auteur du meilleur roman de l'année.

Le Goncourt ne peut être décerné qu'une seule fois à un même écrivain. Citons les noms de quelques lauréats du prix Goncourt: Henri Barbusse, Marcel Proust, Henri Troyat, Marguerite Duras et d'autres. Aujourd'hui le lauréat du prix Goncourt reçoit un chèque symbolique de 10 euros.

B. *Trouve la bonne réponse.*

		Vrai	Faux	Pas dans le texte
1.	Le prix Goncourt est très célèbre dans le monde entier.			
2.	Les frères Goncourt Edmond et Jules étaient deux écrivains de la fin du 20-ième siècle.			
3	Le Goncourt peut être décerné une seule fois à la même personne.			
4	La principale fonction de l'Académie devait être de choisir chaque année un romancier connu.			
5	Il y a aussi d'autres prix littéraires.			

Թեստի հատկորոշիչ

Թեստ 4

Առարկա՝ ֆրանսերեն:
Թեմա՝ Գրական մրցանակների պատմությունից՝ Գոնկուր :
Նպատակ՝ պարզել տեքստի հիմնական բովանդակությունը հասկանալու կարողությունների մակարդակը:

Հատկորոշիչների աղյուսակ

Առաջադրանք	Ներկայացման ձևը	Բարդության աստիճանը	Ստուգվող ունակությունները	Միավորը
B	կպ	հ	Տեքստի հիմնական բովանդակությունը հասկանալու կարողություն	10(5 x 2)

կպ- կարճ պատասխան հ- հեշտ

Թեստի տեսակը՝ հայտորոշիչ:
Առավելագույն միավորների քանակը՝ 10:
Տևողությունը՝ 10- 15 րոպե:
Առաջադրանքների թիվը՝ 1:

Պատասխանների աղյուսակ

Հարցեր	Ճիշտ պատասխան	Տրվող առավելագույն միավորների քանակը
1	vrai	2
2	faux	2
3	vrai	2
4	faux	2
5	pas dans le texte	2
		10

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր /Ֆրանսերեն լեզու/ Մ.Գ.Աստվածատրյան, Զ.Վ.Ավետիսյան, Ա.Հ.Խուրշուդյան, Ե.Լ.Երզնկյան, Յ.Գ.Գանջալյան, Լ.Գ.Գրիգորյան, Երևան, 2007
2.ՀՀ ԿԳՆ ԿԱԻ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Ա,Արնաուդյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ.Պետրոսյան, Երևան, 2004
3.Ա.Հովաննիսյան,Կ.Հարությունյան,Ս.Խրիմյան,Ս.Խաչատրյան,Ն.Բայաթյան, Լ.Ալեքսանյան, Վ.Պարուկուրու, Համագործակցային ուսուցում /Ձեռնարկ/, Երևան, 2006
4.Լեզուների իմացության /իրազեկության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ: Երևան, 2005
5.Սովորողների գնահատման հայեցակարգ (հաստատված է ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 14-ի N 14 արձանագրային որոշմամբ)
6. Մեթոդաբանություն հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման
7.Կ. Գրիգորյան, Զ.Ավետիսյան, Ա. Կարապետյան, Ս. Մովսիսյան, Ս. Կարապետյան, Ֆրանսերենի ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, 2008
7.Alliance Française -Référentiel pour le Cadre européen commun, Clé International, 2008: